

Hrahang S. Erusaghimay Partuts' Bardzman Handznazhoghvoy.

K. Pōlis : [s.n.], 1880.

<https://hdl.handle.net/2027/mdp.39015041455851>



Public Domain

http://www.hathitrust.org/access_use#pd

We have determined this work to be in the public domain, meaning that it is not subject to copyright. Users are free to copy, use, and redistribute the work in part or in whole. It is possible that current copyright holders, heirs or the estate of the authors of individual portions of the work, such as illustrations or photographs, assert copyrights over these portions. Depending on the nature of subsequent use that is made, additional rights may need to be obtained independently of anything we can address.

2584

ՀՐԱՀԱՆԳ

Ս. ՇՐՈՒՄԱԴԻՄԱՅ

ՊԱՐՏՈՒՑ ԲԱՐՁՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

#3280

ODAY

EREN

3280

POULW

32

ՀՐԱՀԱՆԳ

Ս. ԵՍՈՒՍԱՂԻՄԱՅ ՊԱՐՏՈՒՑ ԲԱՐՁՄԱՆ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 1. Ինչպէս որ Բարձրաշնորհ Տ.Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք Հայրը կը յիշատակէ իւր շնորհազիծ Կոնդակին մէջ, ամեն Հայ անհատ, առանց լէճակի, սեւի եւ հասակի խորհրդեան, հրաւիրեալ է յօժարակամ մասնակցելու Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման, երեք տարի տարեկան 3 արծաթ դանեկան նուէր տալով, սկսեալ 1880 տարիէն:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՅԱՆԿԵՐՈՒ

ՅՕԴ. 2. Թաղական Խորհուրդները՝ հանգանակութեան գործողութիւնը սկսելէ առաջ, երբ տեսակցանի պատրաստելու են (յատուկ տեսարակի մէջ):

Այս մասին իրենց առաջին գործն է՝ կանչել թագին Մելիւրը, կամ Քեհեան, կամ Քեղերը, կամ Ռեշը (ըստ տեղւոյն), եւ պնդել իբր օրինակ յանձնելով Դեմարիւ Հրահանգին քովի երեսը սպուած ցանկը, պահանջել որ ճիշդ այնպէս պատրաստեն զանոնք:

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Ասոնց առաջինն է՝ իրենց թաղին մէջ գտնուած բոլոր ազգային ընտանեաց մէկ ընդհանուր ցանկը, ամեն մէկ տողին սկիզբը, ^{թիւ} ^{Ընտանեաց} սիւնակին մէջ կարգաթիւ (սըրա նօմէրօսու) գնելով, եւ զայն հետը հետէ մինչեւ վերջը շարունակելով, ինչպէս նաեւ յատուկ սիւնակներուն մէջ նշանակելու են ընտանեաց գլխաւորին անունը, մականունը, տան փողոցին անունը եւ տան թիւը (եթէ կայ) :

Երկրորդ՝ օտարազգի ընտանեաց ծառայող անհատից, ինչպէս նաեւ պանդուխտ կամ տեղացի մենակեաց ազգայնոց մէկ ընդհանուր ցանկը, ամեն մէկ տողին սկիզբը, ^{թիւ} ^{անհատից} սիւնակին մէջ կարգաթիւ գնելով, ինչպէս նաեւ անհատին անունը, մականունը, բնակութեան տեղը, տան կամ սենեկին թիւը :

Պանդուխտ և տեղացի մենակեաց ազգայինք Պօլսոյ մէջ կը գտնուին. բոլոր շատ գաւառներու մէջ չ'կան :

307. 3. Յիշեալ երկու ցանկերը պատրաստելէն ետքը, ^{թիւ} ընդհանուր ցանկէն մեր խրկած գաւառից ցանկերէն վրայ օրինակելու է գաւառի անունը (այսինքն 1 էն մինչեւ 10՝ մէկ տասնեկի ցանկին վրայ, 11 էն մինչեւ 20՝ երկրորդի մը վրայ, եւ այսպէս շարունակելով), որոշեալ սիւնակներուն մէջ՝ ընտանեաց թիւը, գլխաւորին անունը, մականունը, տան փողոցին անունը եւ տան թիւը նշանակելով :

Եթէ 10 էն նուաղ ընտանիք մնայ՝ նոյն մնացորդը որքան որ է, 9, 8, 7 եւ այլն, անոնք ալ զատ տասնեկի ցանկի մը վրայ գրուելու են:

307. 4. Թաղական Խորհուրդներն ընդհանուր ցանկերը պատրաստելու առեն՝ $\frac{\text{Թիւ անհատից}}{\text{Արու. | Էդ.}}$ սիւնակին մէջ բան մը գրել տալու չ'են: Սակայն Առաջին հաւաքիչները՝ դրամ հաւաքելու առեն, ընտանեաց արու եւ էգերը տամնեկի ցանկին յատուկ սիւնակին մէջ նշանակելու են:

307. 5. Փահանայք պարտին նախ՝ 2. յօդուածի մէջ նշանակեալ մասնաւոր ցանկին պատրաստութեան օգնել, եթէ Թաղական Խորհուրդներն այս մասին հրահանգ մի տան իրենց. երկրորդ՝ իրենց ծուխերն եղող ընտանեաց ամեն մէկ անհատներուն՝ այդ թէ կին, թուովը, անուններովը եւ մականուններովը միատեղ, մի ցանկը պատրաստել եւ ներկայացնել Թաղական Խորհրդոց:

Փահանայք իրենց ծուխերու ցանկերը հասնող ցանկն նման գծուած թղթի մը վրայ պատրաստելու են:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՒԱՔՉԱՅ

307. 6. Իւրաքանչիւր Թաղական Խորհուրդ, ընդհանուր եւ տամնեկի ցանկերը պատրաստել տալէն ետքը, թաղին մէջ գտնուող ընտանեաց անհատներու նուէրները պիտի կարենայ հաւաքել տալ միայն

Երեւ տեսակ հաստիչներու ձեռք, որոնք պիտի
կոչուին Առաջին, երրորդ եւ երրորդ հաստիչ :

Առաջին կ'ըսուի այն հաւաքիչներուն, որոնց 1 էն
մինչեւ 10 ընտանիք կը յանձնուին. ասոնք են բուն
նուէր հաւաքողները :

Երրորդ կ'ըսուի այն հաւաքիչներուն, որոնց՝ մինչեւ
100 ընտանիք կը յանձնուին. ասոնք կ'ընտրեն իրենց
ստորակարգեալ Առաջին հաւաքիչները :

Երրորդ կ'ըսուի այն հաւաքիչներուն, որոնց մինչեւ
1000 ընտանիք կը յանձնուին. ասոնք կ'ընտրեն իրենց
ստորակարգեալ երկրորդ հաւաքիչները :

307. Ժ. Եթէ թաղի մը մէջ 1 էն մինչեւ 10
ընտանիք գտնուին, Թաղական Խորհուրդը միայն
Առաջին հաստիչ մը կ'ընտրէ, եւ անոր կը յանձնէ
նոյն ընտանեաց տանեկի ցանկը եւ պէտք եղածին
չափ տոմսակներ :

307. Տ. Առաջին հաւաքիչն՝ իրեն յանձնուած ըն-
տանեաց ամեն մէկ անհատէն յիշեալ 3 արծաթ
դահեկան նուէրը տարին մի անգամ հաւաքելով, կը
յանձնէ Թաղական Խորհուրդին :

307. Թ. Առաջին հաւաքիչն՝ ամեն մէկ ընդու-
նած 3 արծաթ դահեկանի փոխարէն Ս. Երուսաղի-
մայ աթոռոյ եւ Յանձնաժողովոյս կնիքներով վա-
ւերացեալ Գոհալ մը պէտք յանձնէ Ժեմարդին, . Թէ
տոմսակին եւ Թէ բունին (քօչան) վրայ գրելով
նախնական անունը, մականունը, գաւառին,

գիւղին եւ թաղին անուընդ եւ անոր տակը տաքւոյն թուականը :

ՅՕԴ. 10. Եթէ թաղի մը մէջ մինչեւ 100 ընտանիք գտնուին , Թաղական Խորհուրդը միայն Երէրդ Կառաւիւ մը կ'ընտրէ , եւ անոր կը յանձնէ բոլոր ընտանեաց տաանեկի ցանկերը , ինչպէս նաեւ պէտք եղածին չափ տոմսակներ եւ տոմսակի ստացադիրներ :

ՅՕԴ. 11. Երկրորդ հաւաքին՝ իրեն յանձնուած ամէն մէկ տաանեկի ցանկի , այսինքն 10 ընտանեաց մէջէն , մէկ մէկ Աւալի Կառաւիւ կ'ընտրէ եւ ամէն մէկուն կը յանձնէ տաանեկի ցանկ մը եւ պէտք եղածին չափ տոմսակներ :

ՅՕԴ. 12. Այս պարագայիս մէջ ընտրուած Առաջին հաւաքիչը՝ հաւաքած նուէրը կը յանձնէ զինքն ընտրող Երկրորդ հաւաքչին , եւ սա ալ՝ Թաղական Խորհուրդին :

ՅՕԴ. 13. Եթէ թաղի մը մէջ մինչեւ 1000 ընտանիք գտնուին , Թաղական Խորհուրդը Երէրդ Կառաւիւ մը կ'ընտրէ եւ անոր կը յանձնէ բոլոր ընտանեաց տաանեկի ցանկերը , եւ պէտք եղածին չափ տոմսակներ ու տոմսակի ստացադիրներ :

ՅՕԴ. 14. Երրորդ հաւաքին՝ իրեն յանձնուած տաանեկի ցանկերը տաան առ տաան բաժնելով , ամէն մէկ բաժնի , այսինքն 100 ընտանեաց մէջէն ,

մէկ մէկ Երբորդ հաստիչ կ'ընտրէ եւ ամեն մէկուն
կը յանձնէ 100 ընտանեաց տասնեկի ցանկեր, եւ
պէտք եղածին չափ տոմսակներ ու տոմսակի ստա-
ցագիրներ :

ՅՕԴ. 15. Երբորդ հաւաքչէն ընտրուած Երկրորդ
հաւաքիչ մը, ըստ 11. յօդուածի, կ'ընտրէ իրեն
ստորակարգեալ Առաջին հաւաքիչները :

ՅՕԴ. 16. Երկրորդ հաւաքչէն ընտրուած Առա-
ջին հաւաքիչներուն ամեն մէկը, իրեն յանձ-
նուած 10 ընտանեաց նուէրներն, ըստ 9. յօդուա-
ծի հաւաքելով պիտի յանձնէ զինքն ընտրող Երկ-
րորդ հաւաքչին, Երկրորդ հաւաքիչն ալ՝ զինքն
ընտրող Երրորդ հաւաքչին, եւ սա ալ՝ Թաղական
Խորհուրդին :

ՅՕԴ. 17. Եթէ Թաղի մը մէջ 1001 էն մինչեւ
1010 ընտանիք գտնուին, ան ատեն Թաղական Խոր-
հուրդը մէկ Երբորդ եւ մէկ Աւագին հաստիչ կ'ընտրէ :

ՅՕԴ. 18. Եթէ՝ մինչեւ 1100 ընտանիք գտնուին,
մէկ Երբորդ եւ մէկ Երկրորդ հաստիչ կ'ընտրէ :

ՅՕԴ. 19. Եթէ՝ մինչեւ 2000 ընտանիք գըտ-
նուին, երկու Երբորդ հաստիչ կ'ընտրէ :

ՅՕԴ. 20. Իսկ 2000 էն աւելի ընտանիք գըտ-
նուող տեղւոյ մը Թաղական Խորհուրդը՝ սոյն Հրա-
հանգին տրամադրութեանց հետեւողութեամբ, կըր-
նայ գտնել ընելիք գործողութիւնը :

ՅՕԴ. 21. Եթէ Երկրորդ հաւաքչի մը յանձնուած ընտանեաց թիւը ճիշդ փասնի չբաժնուի, օրինակի համար 68 ընտանիք ըլլայ, եթէ Սոաջին հաւաքիչ ընտրելով, վեցին 10 ական, եւ միոյն մնացորդ 8ը կը յանձնէ :

ՅՕԴ. 22. Նոյնպէս եթէ Երրորդ հաւաքչի մը յանձնուած ընտանեաց թիւը՝ ճիշդ 100 ի չբաժնուի, օրինակի համար 376 ընտանիք ըլլայ, չորս Երկրորդ հաւաքիչը ընտրելով, երեքին 100 ական եւ միոյն 76ը կը յանձնէ :

ՅՕԴ. 23. Թաղական Խորհուրդները ընդհանուր եւ մասնաւոր ցանկերը որու ձեռքով որ պատրաստել տան, օտարազգի ընտանեաց ծառայող (Հայ) անհատներու, ինչպէս նաեւ թաղին մէջ գտնուող պանդուխտ եւ մենակեաց ազգայնոց նուէրներն ալ անոր հաւաքել պիտի տան :

ՏՈՄՍԱԿՔ

ՅՕԴ. 24. Յանձնաժողովս՝ իւրաքանչիւր ընտանիքը 10 ական անդամ ենթադրած եւ ըստ այնմ տոմսակներ խրկած է. ուստի եթէ խրկուած տոմսակները պակաս զան, պէտք է որ Յանձնաժողովէս անմիջապէս խնդրուի. իսկ եթէ աւելի զան, պահուելով, Յանձնաժողովոյն ծանուցուի :

Թաղական խորհուրդներն՝ իրենց թաղին ընտանեաց անհատներուն ենթադրական թիւէն աւելի տոմսակներ յանձնելու են հաւաքիչներուն, ինչպէս նաեւ Երրորդ հաւաքիչներն ալ՝ Երկրորդ հաւաքիչներուն, եւ Երկրորդ հաւաքիչներն ալ՝ Առաջին հաւաքիչներուն, որպէս զի տոմսակները պակսելով՝ իրարմէ նոքէն ուղեւոր հարկ չֆնայ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՅԵՏ ՀԱՒԱՔՄԱՆ

ՅՕԴ. 25. Թաղական խորհուրդները, հաւաքման գործողութիւնը աւարտելէ ետքը, Առաջին հաւաքիչներուն տաանկէի ցանկերուն $\frac{\text{Թիւ անհատից}}{\text{Արու | Եգ}}$ սիւնակին թիւերը ընդհանուր ցանկին որոշեալ սիւնակին մէջ փոխադրելով, Յանձնաժողովոյս հաշիւ տուած ժամանակ, ընդհանուր եւ մասնաւոր ցանկերուն մէկ մէկ օրինակները խրկելու են, բնագիրներն ինչպէս նաեւ տոմսակներուն բուները իրենց քովը պահելով:

ՅԱՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ՅՕԴ. 26. Առաջնորդները, Քարողիչները կամ Աւագերէցները Կոնդակը կարգաւոր ատեն եւ հանգանակութեան միջոցին քանի քանի անգամներ Եկեղեցւոյ ատեանէն բնականաբար այս մասին յորդոր պիտի կարգան ժողովուրդին:

Այս յորդորներն ընելու ատեն՝ յիշելու են նաեւ թէ ամեն մէկ անհատ իրեն տոմսակ ներկայացնող Առաջին հաւաքչին վճարելու է իւր նուէրը :

ՅՕԴ. 27. Նուիրատուները իրենց առած տոմսակները պահելու են, որ հարկ եղած ատեն հաւաքիչներուն ցուցնեն :

ՅՕԴ. 28. Ինչպէս Թաղական Խորհուրդները, նոյնպէս եւ Երրորդ եւ Երկրորդ հաւաքիչները իրենց ընտրած հաւաքիչներուն տոմսակ յանձնած ատեն, պարտին տոմսակի ստացագիր առնել, ընդունողին «Կորաֆրո-Ռեւմբ», որուն մէջ նշանակուած պիտի ըլլան յանձնուած տոմսակին «Հանդիւն-Ռեւմբ», «Բե-գիւն» եւ «Գրան Ռեւմբ» :

Հետեւաբար ամեն կարգի հաւաքիչ զինքն ընտրողին թէ ստակ եւ թէ աւելցած տոմսակներն ու սպառեալ տոմսակաց բուները յանձնած ատեն, պարտի տուած ստացագիրն եօթնէլ, եւ կամ անոր ետեւի կողմը յանձնած ստակին կամ տոմսակին որչափ ըլլալը նշանակել :

ՅՕԴ. 29. Առաջին հաւաքիչները՝ ազգային ընտանեաց ծառայող (Հայ) սպասաւորները եւ սպասուհիները նոյն ընտանեաց անհատներու Թուոյն վրայ յաւելցնելով, նուէրներն ընտանեաց գլխաւորին միջոցաւ իրենցմէ պիտի առնուն, եւ Զանգ-

Եւ-Եւան սիւնակին մէջ պիտի նշանակեն անոնց քանի՞ արու եւ էգ ըլլալը :

ՅՕԴ. **30.** Տեղափոխութիւն ընող կամ առժամանակեայ կերպով ուրիշ տեղ մը ընակութիւն հաստատող ամբողջ ընտանիք մը, կամ ընտանեայ մէկ մասը, իրեն զտնուած տեղը ներկայացած Առաջին հաւաքչին վճարելու է իրեն նուէրները :

ՅՕԴ. **31.** Թաղի մը մէջ հանդանակեալ ընդհանուր գումարին հարիւրին երկուսէն՝ ըստ 2. յօդուածի ցանկերը պատրաստող անձին, հարիւրին հինգէն ըստ 5. յօդուածի ծուխերու ցանկերը պատրաստող քահանայից վճարուելէն ետքը, հարիւրին քսան ալ նոյն թաղի թաղային մատուկին պիտի մնայ :

Հետեւաբար թաղի մը մէջ հանդանակեալ ընդհանուր գումարին հարիւրին եւ երկուսէն՝ ըստ 2. յօդուածի պարտուց բարձման Յանձնաժողովոյ տրամադրութեան ներքեւ պիտի դրուի :

Թաղական Խորհուրդները՝ թէ՛ ընդհանուր եւ մասնաւոր ցանկերը պատրաստող անձին եւ թէ՛ քահանայից դրամ վճարած տան, ստացադիր տուելու են :

ՅՕԴ. **32.** Եթէ որոշեալ 3 արծաթ դահեկան նուէրի փոխարէն ժողովուրդին կողմանէ դրամի տեղ ուրիշ բան տրուի, Թաղական Խորհուրդք ազատ

են տրուածն առնելու, եւ վաճառելով՝ արդիւնքը
Յանձնաժողովոյս ուղարկելու :

ՅՕԴ. **33.** Թաղական Խորհուրդները՝ Ս. Երուսա-
ղիմայ անուան տրուած ո՛ր եւ է մասնաւոր նուէր
պարտին ընդունիլ եւ նուիրատուին ստացադիր մը
տալ, եւ ապա Յանձնաժողովոյս տեղեկագրելով՝
հաղորդելի որոշմանն սպասել :

Կ. Պօլիս . 11 Յունվար 1880

Ի դիմաց


Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման Յանձնաժողովոյ

Վ. ԱՏԵՆԱԴՊԻ

ԱՏԵՆԱՊԵՏ

Սէն-Էրէմ Մանուէլ

Յովնանէ Կի-Տէա



**Տետրակիս դիրքը չներելուն
պատճառաւ, սորա մէջ չկրցանք
զետեղել Ընդհանուր ցանկին օրի-
նակը, ինչպէս նաեւ Աղիւսակը :**

**Այս մասին տեղեկանալու հա-
մար հարկ է դիմել մեծադիր Հրա-
հանգին, որ Թաղական Խորհրդա-
րանաց մէջ և Եկեղեցեաց բակերը
կախուած պիտի ըլլայ :**



